ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «13» մարտի 2024թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 54-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ 2024/2» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը, ինչպես նաև ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հուլիսի 12-ի N 28-Լ հրամանի հավելվածի 18-րդ մասի 7-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 7-ի 347-Ա/2 հրամանով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Կազմակերպել Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Մասնագիտական վերապատրաստում 2024/2» մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ)՝

1) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) հանրային կապերի և տեղեկատվության բաժնին (պետ՝ Աստղիկ Մելիք-Քարամյան)՝ ապահովել Մրցույթի հայտարարության հրապարակումը, Մրցույթի հրավերի փաթեթի և արդյունքների տեղադրումը Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում.

2) Կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչությանը (պետ՝ Անի Վիրաբյան)՝

ա) ապահովել Մրցույթի հայտ ներկայացնողներին խորհրդատվության տրամադրումը,

բ) կազմակերպել հայտերի թղթային տարբերակների ընդունումը,

գ) կազմակերպել Մրցույթի արդյունքում շահառու ճանաչված հայտատուների հետ պայմանագրերի կնքումը.

3) Փորձաքննության և վերլուծությունների վարչությանը (պետ՝ Արսեն Հակոբյան)՝

ա) ապահովել Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգով Մրցույթի մասնակցության հայտերի ընդունումը,

բ) ապահովել Մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը,

գ) ապահովել Մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին սահմանված կարգով իրազեկումը.

4) Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տիգրան Գալստյան)՝ սահմանված կարգով ապահովել Մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրումը:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ